



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

6th March 2022

Bulletin 11/2022

### Second Sunday of Great Lent—Expulsion

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՈՌՄԷԱՅԻՆԵՐՈՒՄ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 12:1-13:10

#### Ապրիլ Աստուծոյ ծառայութեան մէջ

Ուստի, եղբայրներ, քանի Աստուած այնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի գոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ աստիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուերը կու տամ իւրաքանչիւրիդ.՝ Մեծամիտ մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծոյ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիստարբեր պարգեւ մը տուած է, որ պէտք է գործածենք:

Եթէ մարգարէութեան պարգեւունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սերը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէք: Եղբորպէս իրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ իրար գերազանցեցէք: Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասեր եղէք: Օրհնեցէք ձեզ հալածողները. մի՛ անհիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

Ունէ մէկուն չարիքին՝ չարիքով մի՛ հատուցանէք: Չանացէք ընել այն՝ ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ աստիկա. որովհետեւ Տերը Սուրբ գիրքին մէջ կ'ըսէ. «Իմա է դատելու եւ պատժելու իրաւունքը. ես պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ.՝ «Եթէ թշնամիդ քաղցած է՝ հաց տուր իրեն. եթէ ծարաւ է՝ ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօթը զինք կ'այրէ»:

Մի՛ պարտուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին:

#### Հնազանդիլ իշխանութեան

Ամենամարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծոյ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը

#### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՞ս իշխանութենէն չվախնալ: Բարի՛ք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցի՛ր անկէ, որովհետեւ զուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ՝ բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչո՞ւ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ, որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ՝ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

### Մէր իրարու հանդէպ

Ուե՛է մէկուն ուե՛է բանով պարտական մի՛ մնաք. միմիայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, մի՛ սպաննէր, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ ընէր, մի՛ ցանկար» եւ միւս բոլորը, խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Մի՛րէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել:

## The Epistle of St Paul to the Romans 12:1-13:10;

### Living Sacrifices

Therefore I urge you, brothers, on account of God's mercy, to offer your bodies as living sacrifices, holy and pleasing to God, which is your spiritual service of worship. Do not be conformed to this world, but be transformed by the renewing of your mind. Then you will be able to test and approve what is the good, pleasing, and perfect will of God.

For by the grace given me I say to every one of you: Do not think of yourself more highly than you ought, but think of yourself with sober judgment, according to the measure of faith God has given you. Just as each of us has one body with many members, and not all members have the same function, so in Christ we who are many are one body, and each member belongs to one another.

We have different gifts according to the grace given us. If one's gift is prophecy, let him use it in proportion to his faith; if it is serving, let him serve; if it is teaching, let him teach; if it is encouraging, let him encourage; if it is giving, let him give generously; if it is leading, let him lead with diligence; if it is showing mercy, let him do it cheerfully.

### Love, Zeal, Hope, Hospitality

Love must be sincere. Detest what is evil; cling to what is good. Be devoted to one another in brotherly love. Outdo yourselves in honouring one another. Do not let your zeal subside; keep your spiritual fervour, serving the Lord. Be joyful in hope, patient in affliction, persistent in prayer. Share with the saints who are in need. Practice hospitality.

### Forgiveness

Bless those who persecute you. Bless and do not curse. Rejoice with those who rejoice; weep with those who weep. Live in harmony with one another. Do not be proud, but enjoy the company of the lowly. Do not be conceited.

Do not repay anyone evil for evil. Carefully consider what is right in the eyes of everybody. If it is possible on your part, live at peace with everyone.

Do not avenge yourselves, beloved, but leave room for God's wrath. For it is written: *"Vengeance is Mine; I will repay, says the Lord."*<sup>b</sup> On the contrary, *"If your enemy is hungry, feed him; if he is thirsty, give him a drink. For in so doing, you will heap burning coals on his head."*<sup>c</sup>

Do not be overcome by evil, but overcome evil with good.

### Submission to Authorities

Everyone must submit himself to the governing authorities, for there is no authority except that which is from God. The authorities that exist have been appointed by God. Consequently, whoever resists authority is opposing what God has set in place, and those who do so will bring judgment on themselves.

For rulers are not a terror to good conduct, but to bad. Do you want to be unafraid of the one in authority? Then do what is right, and you will have his approval. For he is God's servant for your good. But if you do wrong, be afraid, for he does not carry the sword in vain. He is God's servant, an agent of retribution to the wrongdoer.

Therefore it is necessary to submit to authority, not only to avoid punishment, but also as a matter of conscience. This is also why you pay taxes. For the authorities are God's servants, who devote themselves to their work. Pay everyone what you owe him: taxes to whom taxes are due, revenue to whom revenue is due, respect to whom respect is due, honour to whom honour is due.

## Love Fulfils the Law

Be indebted to no one, except to one another in love. For he who loves his neighbour has fulfilled the law. The commandments “Do not commit adultery,” “Do not murder,” “Do not steal,” “Do not covet,”<sup>a</sup> and any other commandments, are summed up in this one decree: “Love your neighbour as yourself.”<sup>b</sup> Love does no wrong to its neighbour. Therefore love is the fulfilment of the law.

## ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5:17-48

### Օրենքի ճշմարիտ ուսուցումը

Մի՛ կարծեք թե եկայ Մովսեսի Օրենքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցեք, որ բոլոր Օրենքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, եթէ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը Փարիսեցիներուն եւ Օրենքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

### Ուսուցում բարկութեան մասին

Լսեր էք որ անցեալին ըսուած է. *«Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ՝ պիտի դատաւարտուի»*: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Ով որ առանց պատճառի իր եղբօր դէմ բարկանայ, դատարան պիտի յանձնուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, Ատեան պիտի բերուի. եւ ով որ իր եղբայրը անմիտ կոչէ, դժոխքի կրակին պիտի դատաւարտուի: Եթէ զոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա նախ հաշտուէ՛ եղբօրդ հետ եւ ա՛պա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ՝ դատարան չինկած, այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վս տահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

### Ուսուցում շնութեան մասին

Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ո՛վ որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս:

### Ուսուցում ապահարգանքի մասին

Ըսուած է նաեւ. *«Ով որ իր կիներ կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ»*: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ:

### Ուսուցում երդումի մասին

Լսեր էք նաեւ որ անցեալին ըսուած է. *«Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդումս էիր Տիրոջ»*: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որովհետեւ անոր ոտքին պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ ո՛չ ալ քու գլխուդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մագ մը իսկ ներմկցնել կամ սեւցնել: Պարգապէս ձեր Այոն Այո թող ըլլայ եւ Ոչը՝ Ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ:

### Ուսուցում վրէժի մասին

Լսեր էք որ ըսուած է. *«Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակրայի դէմ՝ ակրայ»*: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ զարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՝ տուր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ՝ երես մի՛ դարձներ:

### Թշնամիները սիրել

Լսեր էք արդարեւ որ ըսուած է. *«Միրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ»*: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր գաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն ձեզ սիրողները սիրէք, Աստուծմէ՛ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել: Մաքսաւորներն ալ նոյնը չէ՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չէ՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

## **The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 5:17-48**

### **The Fulfilment of the Law**

Do not think that I have come to abolish the Law or the Prophets. I have not come to abolish them, but to fulfil them. For I tell you truly, until heaven and earth pass away, not a single jot, not a stroke of a pen, will disappear from the Law until everything is accomplished.

So then, whoever breaks one of the least of these commandments and teaches others to do likewise will be called least in the kingdom of heaven; but whoever practices and teaches them will be called great in the kingdom of heaven. For I tell you that unless your righteousness exceeds that of the scribes and Pharisees, you will never enter the kingdom of heaven.

### **Anger and Reconciliation**

You have heard that it was said to the ancients, ‘Do not murder’ and ‘Anyone who murders will be subject to judgment.’ But I tell you that anyone who is angry with his brother will be subject to judgment. Again, anyone who says to his brother, ‘Raca,’ will be subject to the Sanhedrin. But anyone who says, ‘You fool!’ will be subject to the fire of hell.

So if you are offering your gift at the altar and there remember that your brother has something against you, leave your gift there before the altar. First go and be reconciled to your brother; then come and offer your gift.

Reconcile quickly with your adversary, while you are still on the way to court. Otherwise, he may hand you over to the judge, and the judge may hand you over to the officer, and you may be thrown into prison. Truly I tell you, you will not get out until you have paid the last penny.

### **Adultery**

You have heard that it was said, ‘Do not commit adultery.’ But I tell you that anyone who looks at a woman to lust after her has already committed adultery with her in his heart. If your right eye causes you to sin, gouge it out and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to be thrown into hell. And if your right hand causes you to sin, cut it off and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to depart into hell.

### **Divorce**

It has also been said, ‘Whoever divorces his wife must give her a certificate of divorce.’ But I tell you that anyone who divorces his wife, except for sexual immorality, brings adultery upon her. And he who marries a divorced woman commits adultery.

### **Oaths and Vows**

Again, you have heard that it was said to the ancients, ‘Do not break your oath, but fulfil your vows to the Lord.’ But I tell you not to swear at all: either by heaven, for it is God’s throne; or by the earth, for it is His footstool; or by Jerusalem, for it is the city of the great King. Nor should you swear by your head, for you cannot make a single hair white or black. Simply let your ‘Yes’ be ‘Yes,’ and your ‘No,’ ‘No.’ Anything more comes from the evil one.

### **Love Your Enemies**

You have heard that it was said, ‘Eye for eye and tooth for tooth.’ But I tell you not to resist an evil person. If someone slaps you on your right cheek, turn to him the other also; if someone wants to sue you and take your tunic, let him have your cloak as well; and if someone forces you to go one mile, go with him two miles. Give to the one who asks you, and do not turn away from the one who wants to borrow from you.

You have heard that it was said, ‘Love your neighbour’ and ‘Hate your enemy.’ But I tell you, love your enemies and pray for those who persecute you, that you may be sons of your Father in heaven. He causes His sun to rise on the evil and the good, and sends rain on the righteous and the unrighteous. If you love those who love you, what reward will you get? Do not even tax collectors do the same? And if you greet only your brothers, what are you doing more than others? Do not even Gentiles do the same?

Be perfect, therefore, as your heavenly Father is perfect.

## **ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՐՈՍ ՉՈՐԱՎԱՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ**

Սբ. Թեոդորոս զորավարը համաքրիստոնեական սուրբ է, որի հիշատակությունը Հայ Առաքելական եկեղեցին տոնում է Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը: Ըստ վարքագիրների՝ նա ծնվել էր Ամասիա քաղաքի Սարու գյուղում և ունեցել քրիստոնյա բարեպաշտ ծնողներ:

4-րդ դարի սկզբին, Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ, ապացուցելու համար կուռքերի հնարովի եւ կեղծ լինելը, գիշերով հրի է մատնել հեթանոսական Ռեա չաստվածուհու մեկիանը: Այս արարքի համար բանտ է նետվել և մեծագույն չարչարանքներից հետո 306 թվականին նահատակվել՝ այրվելով կրակի վրա: Սբ. Թեոդորոս զորավարը հայտնի է նաև, որպես վիշապասպան, որ քաջությամբ ու հավատով հաղթել է հսկա վիշապի: Օտար եկեղեցիներում հայտնի է նաև «Դիոն» անվամբ, որ հունարեն նշանակում է «նորեկ» զինվոր:



## COMMEMORATION OF ST. THEODOROS THE CAPTAIN

St. Theodoros the Captain is a Saint recognized by all traditional churches of Christendom. The Armenian Church commemorates this Saint on the first Saturday during the period of Great Lent. According to hagiographers, St. Theodoros was born to God-fearing and pious parents in the village of Saroo, near the town of Amasia. He was a soldier in the Roman Army, and rose through the ranks, eventually becoming a Captain.

In the beginning of the fourth century, Rome was under the rule of the Emperor Diocletian. Instead of worshipping at the temple of the pagan goddess Rea, as he had been instructed to, St. Theodoros burns the temple to the ground, thus demonstrating that pagan idols were false. For this act, Diocletian imprisons St. Theodoros, and he suffers severe tortures. In the year 306 A.D., he is martyred by being set on fire. St. Theodoros is also known as the “Slayer of the Dragon”, as he was said to have defeated a great and mighty dragon due to his courage and faith.

## ԱՐՏԱԶՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է նաև Արտաքսման: Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. «...Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էր»: (Ծննդ. 3:23): Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբերայական խոսքերին, պատվիրանագանգ գտնվելով՝ համոտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն գրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր և հող կդառնաս» (Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, գղջում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

## SUNDAY OF EXPULSION

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: “So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed” (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn’t die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God said to the human being: “You were made from soil and you will become soil again” (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great lent such names and mysteries which symbolize the mankind’s way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her life so that the period of great Lent should be fruitful and productive.

## PRAYER SERVICES DURING THE GREAT LENT

Monday, 28th February, is the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

**Liturgical celebrations on Sundays:** There are services every Sunday starting at 11:00 am at St Yeghiche Armenian Church. The faithful are welcome to join and are encouraged to wearing of face masks when attending church to help the venerable.

**Vigils on Friday evenings:** There are vigils every Friday evening at St. Yeghiche Armenian Church (on 4th, 18th March and 1st April) and St Sarkis Church (on 11th, 25th March and 8th April) starting from 4th March. Service will begin at 6:30 pm. The faithful are welcome to join and are encouraged to wearing of face masks when attending church to help the venerable.

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՈՒՂԵՐՁԸ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՌԻԹՈՎ**

Միրելի հաւատաւոր զաւակներ,

Հոգեւոր կեանքի ճանապարհի կարեւոր հանգրուանին ենք վերստին : Պատրաստում ենք Մեծ Պահքին : Այս խորհրդաւոր ժամանակաշրջանում զոյմամբ ու ապաշխարութեամբ հայցում ենք Աստուծոյ ողորմութիւնը մեղքերի ներման եւ փրկութեան շնորհին արժանի լինելու համար :

Միրելիներ, պահքը համընդհանուր ապաշխարութեան, ինքնամաքման եւ ինքնակատարելագործման ճանապարհն է ցոյց տալիս, Աստուծոյ արքայութեան ժառանգորդ լինելու շնորհը պարգեւում, միտքն ազատում տագնա-պալի ու յուսահատ խոհերից, հոգուն սրբութիւն է բերում եւ մարմնին՝ օգտակարութիւն: Պահեցողութիւնը օգնում է մեզանում կատարելութեան նախանձախնդրութիւնը զօրացնել, սէր եւ հանդիմանութիւն տարածել առ մերձաւորը, հաստատել բարիք ու խաղաղութիւն ընտանեկան կեանքում, շրջապատում եւ հասարակութիւնում: Այսպիսի հոգեշահ իրագործումները ուժ են տալիս, որպէսզի զօրանանք տէրունապատուէր խոնարհութեան ու հեղութեան մէջ (Մատթ. 11.29), հեռու մնանք կամայականութիւնից եւ կատարենք մեր Տիրոջ եւ Փրկչի կամքը :

Իրաքանչիւրս մեր կոչման ու ծառայութեան մէջ պէտք է դրսեւորենք այս բարի վարքը: Ամէնքս պահեցողութեան նախանձախնդրութեամբ գերծ լինենք անձնակենտրոն նկրտումներից ու վնասակար ընթացքներից, գործենք ընդհանուրի բարիքի համար: Ջանք ներդնենք՝ Քրիստոսաւանդ պատուիրանների համաձայն ապրելու աստուածօրհնեալ մեր կեանքը, յաղթահարելու անարդարութիւնը, միսիթարութիւն բերելու վշտացեալ-ներին, աշակցութիւն կարիքաւորներին: Պատերազմի դառնութիւնները ճաշակած մեր ժողովրդի վիրաւոր հոգուն սպեղանի է պահքը, յոյսի լուսաւոր շող, ցաւի ամոքում, քանգի մեզ կոչում է լաւատեսութեամբ ներշնչուելու, քաջալերուելու, աւելի լաւ իրականութիւն ստեղծելու, որտեղ մեղքի ու մահուան փոխարէն թագաւորում են առաքինութիւններն ու աստուածա-հաճոյ կեանքը:

Աղօթենք միասին, որ մեր պահեցողութեամբ ու ապաշխարութեամբ Աստուած մեզանից հեռացնի ամէն անկատարութիւն ու մեղսաւոր ընթացք եւ խաղաղութեան, համերաշխութեան ու հոգեւոր ուրախութեան մէջ հաստատի մեր կեանքը: Հայցենք, որ արժանի լինենք Տիրոջ ամենաառատ ողորմութեանը եւ Փրկչի հրաշափառ Յարութեան տօնը դիմաւորենք մաքուր սրտով ու հոգով: Թող մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի սէրը եւ շնորհները լինեն մեզ հետ եւ ամէնքի, այսօր եւ միշտ. Ամէն :

## ՄԻԶԻՆՔԻ Ճաշկերոյթ

**St Yeghiche Armenian Church Parish Ladies Guild**

invite you for

## GREAT LENT LUNCHEON

at Navasatian Centre, 223 Northfields Ave, London W13 9QU

on Wednesday 23rd March 2022

starting at 11:30

All members of the family are invited



Please book your table and for more details or information please call:  
Mrs Hroosh: 07752 791870  
Mrs Gayane: 07775 895122  
Mrs Noushig: 07932 952868  
Mrs Lousine: 07732 202356

Donation £20.00  
Children under 7 Free

Your attendance and supporting our ladies for a wonderful and delicious Lenten dishes will be Highly appreciated.

### 3: This week's message from our Priest in Charge

#### **Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, Նա է փրկելու մեզ» (Ես. 22-33):*

Աստծուն զաւակացած եղբայրներ եւ քոյրեր,

Մեծ Պահքի ապաշխարութեան շրջանի մէջ ենք, ընդհանրական հոգեւոր խոկումի եւ միաժամանակ առանձնական, անհատական ինքնաքննութեան մէջ: Նախորդ կիրակիի՝ դրախտի ուրախութեան յիշեցումից յետոյ այս կիրակին մեզ ակնարկն է տալիս մարդու անկումի, Աստծոյ դէմ ելնելու եւ դրախտից դուրս դրուելու: Այս պատճառով խորհրդանշական **ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ** անունն է կրում:

Կեանքում շատ են այնպիսի միջադէպերը, երբ կորցնելուց յետոյ է գնահատում, ամբողջապէս արժեւորում այն, ինչ մեր ձեռքում ունէինք: "Դրախտ կորուսեալ"-ը մեզ համար այդքան զգալի ու ցաւալի չէ, որքան դա իրէնց աչքերով տեսած առաջին մարդկանց համար: Ադամի եւ Եւայի մէջ խտանում է ամբողջ մարդութիւնը: Մենք եւս մեր դրախտներն ենք կորցնում՝ ականայ մեր հարազատութիւնը ցոյց տալով նախաձեռնողներին: Ուրեմն, միայն իրենք չեն արտաքսուած, այլ մենք եւս: Շատերն են մեղադրում Եւային կամ Ադամին, թէ ինչու հնազանդ չեղան Աստծուն եւ կորցրին դրախտը, բայց մենք եւս ամէն օր մեր փոքր կամ մեծ անհնազանդութեամբ կորցնում ենք մեր փոքր կամ մեծ, ներքին ու արտաքին "դրախտները":

Յետեւաբար, Արտաքսման կիրակիից եկեղ պատգամը մեր անցեալի վերաքննումն է՝ առանց մեղադրելու այլոց. ո՛չ Աստծուն, որ մեր մտածելով ինչ-որ բան կարծես սխալ է արել եւ ո՛չ էլ մեր աչքին օձի դերում մեղադրուող այլ մարդկանց: Անցեալի վերաքննումն է՝ ըստ մեր ապրածի, ըստ մեր իսկ ազատ կամքով գիտակցաբար արուած ընտրութիւնների: Ինքնաքննութեամբ է նուաճում ինքնաճանաչման ներքին ամբողջը: Ինքն իրեն չը կեղծող, ազնիւ կերպով քննող մարդը խոստովանում է, որ սխալներ ու մեղքեր ունի, որ յաճախ իրեն ոչ թէ արտաքսել են, այլ ինքն է կամաւորաբար հեռացել: Իսկ այս մտածումը ծնում է ափսոսանք, զոջում եւ վերադարձի ցանկութիւն:

Ինքերս մեզ անկեղծօրէն խոստովանենք, որ մենք աւելի լաւ չենք, քան դրախտաբնականները, որ մենք էլ ենք այս պահին տառապում մեր իսկ գործած սխալների եւ մեղքերի արդիւնքում: Մենք պէտք է խոստովանենք, որ հոգով հիւանդ ենք եւ ապրում ենք մեզալեւնեցիկ կազմուած հասարակութեան մէջ, որ հոգեւորապէս նոյնպէս խոցուած, խեղուած ու հիւանդ է: Վկան՝ սպանութիւնների եւ ինքնասպանութիւնների ահագնացող թիւը, նաւթի ու դրամի համար պատերազմներում զնդակներից, թունաւոր նիւթերից ու սովից մահացած մանուկները, մահից մազապուրծ փախստականները: Ամէն հասարակութիւն հիւանդ է իւրովի, ամէն մէկն իր ականջներին շշնջացող ի՞ր օձն ունի: Իսկ օձը խօսում է իւրաքանչիւրի թաքուն ցանկութիւնների, ծուռ ու մոլար կրքերի մասին: Նայենք իրէնց առաջադէմ կոչող այսօրուայ հասարակութիւններին. կերուած են բոլոր "արգելուած պտուղները", չը կայ այլեւս մի անկիւն, որ անձեռնմխելի է, սրբազան, երկիւղալի, վեհ, ոտնամաններն առջելը հանելու չափ սուրբ....

Մենք Աստծուն Տէր եւ Հայր ենք կոչում, բայց հարցը դրանով չի փակւում. *«Որդին փառաւորում է Հօրը, եւ ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթէ ես Հայր եմ, ո՞ր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ր է իմ պատիւը, - ասում է Ամենակալ Տէրը» (Մատթ.1.6):*

Արտաքսման կիրակիի մտածումով՝ մեր հոգին հարսանիքը կիսատ թողած հարսի նման է: Եւ կրկնակի կարեւոր է դառնում այն խոկումը, որ այն, ինչի համար թողեցինք մեր դրախտները, ժամանակաւոր հաճոյքների պէս են: Ըստ այդմ՝ նոր հրապուրիչ օձային առաջարկներից հրաժարուելու եւ վերադարձի կամք պէտք է ունենանք. *«աշխարհն անցնում է, իսկ ով կատարում է Աստծոյ կամքը, մնում է հաւիտեան» (Ա.Յովհ. 2.17):*

Իսկ ո՞րն է Աստծոյ կամքը. *«Այս է իմ Հօր կամքը. ամէն ոք, ով տեսնի Որդուն եւ հաւատայ նրան, ունենայ յաւիտեանական կեանք. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել տամ» (Յովհ. 6.40):* Աստծոյ կամքը մեր որդիութիւնն է Իրեն, Իր Որդուն նմանութիւնն ունենալն ու Փրկչի ետեւից քայլելն է, ինչպէս Քրիստոս իսկ ասում է. *«Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց. "Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ստես քո թշնամուն": Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարոյթի՛ն արէ՛ք ձեզ ատողներին եւ աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում, որպէսզի որդիներդ լինէ՛ք ձեր Հօր, որ երկնքում է.» (Մատթ. 6.43-45):*

Այօրուայ շարականը գեղեցիկ կերպով ամփոփում է այս կիրակիի խոկումը՝ մեզ կոչ անելով. *"Կեանքի դրախտից ելնելու համար Ադամի տրտմութեան հետ մենք էլ ընդունենք ապաշխարութեան տրտմութիւնը, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանանանք մտնել Եկեղեցու դրախտը":*

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no memorial service request for this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Աթապետին 07548 777 147:

#### HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS

Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcome your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, 13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

